Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Հակադրության արտացոլումը Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Պողոսյան Մարիամ Սերյոժայի Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի 099 132 948 poghosyanmariam880@gmail.com
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Հ.Օշականի անվան համար 172 հիմնական դպրոց Ք. Երևան, Բաղրամյան 59 ա 010 22 58 34 school172@schools.com

Ք. Երևանի թիվ 172 հիմնական դպրոցն ունի 670 աշակերտ, 25 դասարան։

Պետք է լինի 1-2 էջ

Բովանդակություն

Ներածություն **3**

Հիմնական բովանդակություն **5**

Եզրակացություններ **21**

Օգտագործված գրականության ցանկ **22**

Հավելվածներ **23**

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Հետազոտական աշխատանքի նպատակներն են.** 1. Զարգացնել սովորողների գրական ստեղծագործության ասելիքն ընկալելու կարողությունը, վերլուծական-քննադատական մտածողությունը: 2. Սովորողներին ներգրավել հետազոտական ակտիվ աշխատանքի մեջ: 3. Ավանդական և ժամանակակից մեթոդները համադրելով՝ բարձրացնել ուսուցման արդյունավետությունը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողուն ակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	**Լեզվական գրագիտություն և կարողունակություն** - Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր հաղորդակցվում են մայրենի լեզվով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության գործիք: Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել և մեկնաբանել տարբեր կարծիքներ: **Սովորել սովորելու կարողունակություն** - Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են

	իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու ունակություններ, համակարգային և ինտեգրված մտածողություն:
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Յոթերորդ «ա» դասարան, 25 աշակերտ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Կատարվել է տեսամեթոդական գրականության վերլուծություն, մշակվել է հարցաշար, խմբային աշխատանքով դասապլան 2 ժամի համար:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	2023 թվականի սեպտեմբեր

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

Լիրիկ էր ոչ միայն իր գրքերում, այլև կյանքում: Մոլորություններ չուներ...«Ամենամեծ անկարգությունը», որ նա կարող էր թույլ տալ, այն էր, որ փողոցում կկռանար, կվերցներ մի հողակոշտ և ազահաբար կհամբուրեր. «Ոչ մի հող այսպես չի բուրում, չէ՞...»

Գուրգեն Մահարի

21-րդ դարի Հայաստանում ռազմավարական խնդիր է կրթական գործընթացի արդիականացումն ու նորովի զարգացումը՝ որպես հասարակության զարգացման կարևորագույն գործոն, որը թույլ կտա երկրին դառնալ մրցունակ պետություն ժամանակակից աշխարհում և ապահովել արժանապատիվ կյանք իր քաղաքացիների համար: Այս պայմաններում երկրի վերափոխման հիմնական սուբյեկտ դառնում են քաղաքացու անձի կարևորագույն հատկանիշները. հակադրությունները տեսնելու, վերլուծելու, ստեղծագործաբար մտածե-լու, ոչ ստանդարտ լուծումներ գտնելու կարողունակություն, ամբողջ կյանքի ընթացքում մշտապես սովորելու պատրաստակամութ-յուն, հայրենասիրություն, գիտակցված քաղաքացիական դիրքորոշում: Այս բոլոր հմտու-

թյունները ձևավորվում են ընտանիքում, կրթական հաստատություններում, ինչպես նաև մարդասիրական մշակութային ավան-դույթներով, սովորույթներով զարգացած հասարակությունում: 21-րդ դարի երրորդ տասնամյակը մեր երկրի համար առանձնա-նում է պետության և գիտակրթական հանրու-թյան ուշադրության ինտենսիվ աճով կրթա-կան համակարգի որակի, արդյունավետու-թյան բարձրացման հարցերին: Կրթական համակարգը դարձել է երկրի հզորության և անվտանգության, ինչպես նաև հասարակու-թյան դինամիկ տնտեսական աճի և սոցիա-լական զարգացման կարևորագույն նախա-դրյալ և պայման: Հետևաբար կարևոր են դառնում սովորողին մտածել սովորեցնելու, ասվածն ընկալելու, վերլուծելու, քննադատա-բար մտածելու կարողունակությունների զար-գացումը յուրաքանչյուր առարկայի շրջանակ-ներում: Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի ուսումնասիրության ընթացքում կիրառվող ավանդական և ժամանակակից մեթոդները փոխկապակցված են, լրացնում են իրար և խթանում են սովորողների հետաքրր-քրությունները, զարգացնում վերլուծելու, համեմատելու կարողությունները, քննադա-տական մտածողությունը, բացահայտում գեղ-արվեստական ստեղծագործության ասելիքը:

Վերջնարդյունքում՝ սովորողը յուրացնում և արժևորում է Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը, գրական ստեղծագործության միջոցով «տեսնում է» անցած ու ներկա ժամանակների կապը, հակադրությունը բացահայտելու միջոցով կատարում է ինքնուրույն եզրահանգումներ՝ օգտագործելով գիտելիքներն ու հմտությունները:

Ակսել (Ալեքսանդր) Բակունցը (1899-1937) իր գունեղ արվեստով խոր հետք է թողել հայ սովետական արձակի զարգացման մեջ: Գորիսի ծխական դպրոցն ավարտելուց հետո Բակունցն ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, գիտելիքների մեծ պաշար է ձեռք բերում, խորանում է հայերենի գրականու-թյան մեջ, իսկ հետո արդեն մանկավարժական աշխատանք կատարում Զանգեզուրի Լոր գյուղում: Կյանքի հետաքրքիր ճանապարհ է անցել նա. հայոց գրեր է սովորեցրել գյուղի երեխաներին, զենքը ձեռքին պաշտպանել հայրենի հողը, գյուղատնտեսական գիտելիք-ներով զինել հայ ցելերի սերմնացաններին և, վերջապես, լիովին նվիրվել գրականությանը, պատկերել իր վերածնված ժողովրդի դաժան անցյալն ու պայծառ ներկան, մեծ հետաքրր-քրրություն առաջացրել ընթերցողի մեջ: Մի զրույցում, դիմելով հանրահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանին, Ավետիք Իսահակյանն ասել է.

«Կոմիտասի երգերի և քո գույների մասին խոսում են որպես բառերով անթարգ-մանելի հրաշքների մասին: Բայց դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կա մի գրող, որի բառերը զրնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են քո կտավների գույներով: Դա Ակսել Բակունցն է: Նա մեր արձակի ամենա-տաղանդավոր ներկայացուցիչն է:»:

1927 թվականը վճռորոշ եղավ Բակունցի համար. ընթերցող հասարակության սեղանին նա դրեց «Մթնաձոր» ժողովածուն՝ անկազմ ու անհրապույր ձևավորումով, որը թեև չէր շլացնում արտաքին փայլով, բայց գրչի կախարդը շռինդը ծոցվորել էր գրքում, որին փառավոր կյանք ու ապագա վիճակվեց՝ իր տեղը հաստատելու գրականության հին ու նոր արժեքների շարքում: Հավիտենական գեղեցկությունների կողքին գեղագետ Բակունցը տես-նում էր դառն ու լուռ ցավեր, որոնք հար նման էին աշխարհի ծայրերում ապրող մարդկանց ցավերին: Նա չէր իդեալականացնում բնաշխարհը, այլ մտահոգ էր բնության անզուգա-կան գեղեցկության մեջ վեր հանելու ժողո-վրդի դառը կացությունը: Բակունցն անհող-դողդ էր, հարազատ իր համոզմունքներին, հին արժեքների կողքին դնում էր իր սրբատաշ որմը, նորի իր արարումը: Նա ցանկանում էր ձերբազատվել հողժողկոմատի՝ իր ծառայութ-

յունից և անցնել ստեղծագործական աշխատանքի:

Դեռեւս 30-ական թվականներից այլախոհի պիտակի տակ էին առել շատերի հետ նաև Բակունցին: Գրական հակառակորդների կողմից բամբասանք ու բանսարկություն էր ծավալվում, և, ինչպես ինքն էր գրում. զրպարտվում էր «բոլոր մահացու մեղքերի մեջ»: Քաղաքական ծանրագույն մեղադրան-քներ են բարդվում Բակունցի հասցեին և 1936 թվականի օգոս-տոսի 9-ին շատերի հետ նաև նրան են ձերբակալում: Մեղադրանքը նույնն էր՝ «հակահեղափոխական, հակախորհրդա-յին, ազգայնամոլական գործունեություն»: Բանտային խիստ պայմաններում 11 ամիս անընդմեջ Բակունցին ենթարկում են կտտան-քների: Նրա ինքնաարդարացման ճիգերն ապարդյուն են անցնում, իսկ հուզիչ նամակ-ները՝ մնում անպատասխան: Նամակներից մեկում այսպես է ներկայացնում իր հոգեվի-ճակը. «Ծա՛նր է, շա՛տ ծանր... Մտածում ես մեկ ժամ, երկու, երեք, մեկ օր, երկու օր, մտածում ես հիմարանալու աստիճանի, մինչև հիշողությունդ փուլ է գալիս, և չգիտես՝ գիշե՞ր է, թէ՞ ցերեկ, միայն պարզ գիտակցում ես, որ կյանքը մնաց փակ դռների ետևում... Երբ ես հարցնում եմ, թէ ի՞նչ է լինելու հետո, հուսա-հատվում եմ, գիտակցությունս մթագնում է,

ջղաձգությունները խեղդում են կոկորդս... Ի՞նչ է լինելու ինձ հետ... Գոյության միակ նպատակը մնում է գրականությունը... Ինձ գրելու և կարդալու հնարավորությու՛ն տվեք, ինձ գիրք ու մատի՛տ տվեք...»: Բակունցի սփոփած հույսերն ապարդյուն են անցնում: Նրան 25 բոպեանոց դատական նիստից հետո դատապարտում են պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության:

Կարևոր մի օրենք կա, որի նշանակությունը կյանքում հաճախ անտեսում ենք: Խոսքը հակադրությունների միասնության և պայքա-րի օրենքի մասին է: Այս օրենքը հատկապես կարևոր դեր ունի կրթության ոլորտում: Կրթությունն անվերջ է, քանի որ երբեք չի լինելու իրավիճակ, երբ ունենանք իդեալական կրթություն: Ի տարբերություն ինժեներա-տեխնիկական ոլորտների, որոնցում հնարա-վոր է գտնել լուծումներ, կրթության ոլորտում չեն կարող լինել վերջնական լուծումներ: Կրթությունն անվերջանալի պարադոքսների, հակադրությունների մեջ է, քանի որ այդպիսին է մարդու էությունը: Հետևաբար՝ կրթության համակարգում և մարդկային կյանքում ընդհանրապես ամենակարևոր բանը հակադրությունը տեսնելն ու գիտակ-ցելն է, այն բազմակողմանի վերլուծել կարո-ղանալն է, հակադրության նկատմամբ անհա-տի

սեփական դիրքորոշում ունենալն է, այսինքն՝ հակադրությունների միասնության և պայքարի օրենքի գիտակցումն է: Կրթութ-յան ոլորտում առկա հակադրություններից մեկը ազգայինի և միջազգայինի միջև է: Մարդկանց մի մասը գտնում է, որ Հայաս-տանի կրթության համակարգը պետք է զար-գանա միայն ազգային արժեքների վրա, քանի որ միջազգային ծրագրերը նպատակ ունեն մեզ կտրել մեր արմատներից: Մյուս մասը կարծում է, որ Հայաստանի կրթության ոլոր-տում պետք է ներդրվեն միջազգային օրակար-գում առկա մոտեցումներ. ներառական կրթու-թյուն, պայքար բուլինգի, ընտանեկան բռնու-թյան, խտրականության դեմ: Մի մասը կարծում է, որ ճիշտն ավանդական, ուսուց-չակենտրոն կրթությունն է, մյուսներն աշա-կերտակենտրոն կրթության կողմնակից են: Մի մասը կարծում է, որ երեխաների մեջ պետք է զարգացնենք անհատականությունը: Մյուս-ներն ասում են, որ ավելի կարևոր է ընտա-նիքին, ազգին պատկանելու զգացողության ձևավորում: Բազմաթիվ հակադրություններ կան կրթության ոլորտում: Այս հակադրութ-յունները գրեթե միշտ են եղել: Պարզապես այսօր շփման, հաղորդակցության միջոցների զարգացման, գլոբալացման արդյունքում դրանք ավելի սրվել են ու ինտենսիվ են դարձել: Դժվար է

կողմնորոշվել բազմատեսակ հակադրությունների լաբիրինթոսում: Դա կարող է անել մտածող, խնդիրը բազմակողմանի քննարկող, վերլուծող, հստակ դիրքորոշում և կայուն արժեքային կողմնորոշումներ ունեցող քաղաքացին: Այդպիսի քաղաքացի դաստիարակելու համար հանրակրթական դպրոցը պետք է օգտագործի իր հնարավորությունները: Դպրոցական ուսուցումը պետք է նպաստի յուրաքանչյուր աշակերտի բարձր տեխնոլոգիական, մրցակցային աշխարհում ապրելու պատրաստ անձի դաստիարակությանը: Այն պետք է կառուցվի այնպես, որ շրջանավարտները կարողանան ինքնուրույն դնել և հասնել լուրջ նպատակների, հմտորեն արձագանքել կյանքի տարբեր իրավիճակներին: Այժմ արդեն ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ կարևոր է դառնում ժառանգելով կրթական գործընթացի կենտրոնացվածությունը սովորողի անձի վրա՝ շեշտը դնել ուսումնական նյութի ինքնուրույն ուսումնասիրության և համագործակցային մանկավարժության վրա:

Հիմնական դպրոցի չափորոշչային պահանջների իրականացմանն ընդառաջ առավել արդիական է հնչում աշակերտի նպատակադրման, պլանավորման, կանխատեսման, վերահսկողության, գնահատման, ուղղման, ինք-

նակարգավորման հմտությունների ձևավոր-ման խնդիրը, որտեղ «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում լայն հնարավորություններ կան: Բարձրակարգ ընդհանրական հիմնարար այդ կարողություն-ների և հմտությունների ձևավորման համար մանկավարժին կարող են օգնել մտածողու-թյան զարգացման մեթոդները և հնարները, որը ենթադրում է ձևավորել և զարգացնել նախապես կազմված գործողությունների ծրագիր իրականացնելու, սեփական գործու-նեության ընթացքը, արդյունքները կանխա-տեսելու, պլանավորելու, գնահատելու մարդու կարողությունը: Ժամանակակից կրթության համակարգը հիմնվում է կոմպետենտային մոտեցման վրա: Աշխատանքի հիմքում դրված է կոմպետենտության ընդհանուր հոգեբանա-կան մոտեցումը, որով տվյալ հասկացութ-յունը սահմանվում է որպես բարդ հոգեբա-նական համակարգ, որը ներառում է գիտելիք, կարողություններ, հմտություններ, անձնային որակներ և ընդունակություններ խնդիրներ լուծելու համար: Մեզ համար հատուկ հետա-քրքրքրություն են ներկայացնում անձնային բաղադրիչների զարգացումը: Կոմպետենտու-թյունը ներառում է մասնագիտական այնպիսի գիտելիքներ, հմտություններ ու որակներ, ինչպես սովորելու ունակությունը, ընկալելու,

վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, հակադրությունը գտնելու և հասկանալու կարողությունները, տրամաբանորեն մտածելու, թիմում աշխատելու ունակությունները, հաղորդակցվելու հմտությունները [1, էջ 144]: Կրթության ոլորտում մշտապես պետք է լինի բանավեճ, քննարկում: Չպետք է խուսափել քննադատողներից, հակադրվողներից: Կեղծ համաձայնությունը շատ ավելի վտանգավոր է, քան անկեղծ հակադրությունը: Ինչպես շնչելն ու արտաշնչելն են փոխկապակցված, այնպես էլ՝ ազգայինն ու միջազգայինը, անհատականն ու խմբայինն են փոխկա-պակցված: Այս բևեռներից յուրաքանչյուրի անտեսումը կարող է շատ վտանգավոր հետևանքներ ունենալ հասարակության զարգացման վրա: Ուիլբուր Ռայթը, գրում է. «Բոլոր ճշմարտությունները միախառնված են սխալների հետ: Բոլոր սխալների մեջ կան ճշմարտության հատիկներ: Ազնիվ վեճի նպա-տակը միմյանց աչքերը մաքրելն է, որպեսզի երկու կողմերն էլ լավ տեսնենք»: Մեր կրթա-կան համակարգում ազնիվ վիճել սովորելու կարիք կա, որպեսզի հասկանանք ու կիրա-ռենք հակադրությունների միասնության և պայքարի խորիմաստ օրենքը. հակադրութ-յուն ժողովրդի և շրջապատի միջև, հակադ-րություն Սիմոնի և հովատակի միջև, հակադ-րությունը Կոստանդի

	և Սիմոնի միջև ու պատերազմ և մարդ հակադրությունը, որը մեր ժամանակներում ևս խիստ արդիական է ու հասու միջին դպրոցի սովորողներին:
Հետազոտության ընթացքը	Ա.Բակունցի Սպիտակ ձին պատմվածքին թեմատիկ պլանով հատկացվում է վեց ժամ: Թեմատիկ պլանի այդ հատվածի բաշխումը ներկայացված է հավելված 1-ում: Մեր հետազոտական աշխատանքն իրականացրել ենք վեցերորդ ժամին: Հետազոտության համար կիրառել ենք հարցարան, որը ներկայացված է հավելված 2-ում: Հակադրությունները բացահայտելու համար կիրառել ենք «Հարցադրումներով դասավանդում»,«Առանցքային կետեր» մեթոդները: Սովորողներին բաժանում եմ փոքր խմբերի և խնդրում եմ որպեսզի նրանք առողջ դատողության, փորձառության և նախկին գիտելիքի կիրառմամբ պատասխա-նեն հարցերի շղթայի՝ լրացնելով ընթերցելու բանալիներից իրենց բաժին ընկած աղյուսակ-ները: Սահմանում եմ հարցերի քննարկման ժամանակը, կախված հարցի բովանդակությունից մինչև տաս րոպե: Խնդրում եմ սովորողներին խմբով քննարկել իրենց գրառումները, ընդորում, համոզվում եմ, որ յուրաքանչյուր խումբ ունի գրող անձ, ով հավաքում է ողջ

	խմբի մտքերը, որպեսզի վերջում զեկուցի: Հարցնում եմ, թե արդյոք նրանք հավելյալ ժամանակի կարիք ունե՞ն: Վերջացնելուց հետո յուրաքանչյուր խմբին խնդրում եմ ներկայացնել իրենց խմբային պատասխանը հարցերին: Խնդրում եմ խմբերին որոշել տեքստի առանց-քային կետերը: Նախապես պատրաստված առանցքային կետերը պահում եմ ինձ մոտ, և համեմատելով գրում եմ: Դասարանի ընդհա-նուր պատասխանին հավելում եմ նրանց կողմից բաց թողնված լրացուցիչ առանցքա-յին կետերը և շտկում եմ բոլոր թյուրըմբռնում-ները (եթե սովորողները տալիս են պատաս-խանի մի մասը, դա խնայում է իմ խոսքի ժամանակը՝ առաջացնելով հետաքրքրութ-յուն և զարգացնելով մտածողության հմտու-թյունները): Մեծ շեղումների դեպքում, տալիս եմ ուղղորդող հարցեր, որոնք օգնում են աշակերտներին հնարավորինս մոտենալ իմ առանցքային կետերին: Պարտադիր չէ, որ լինեն ճշգրիտ համընկնող կետեր, այլ կարևոր է, որ իմաստը արտահայտի և նպաստի ուսումնառության վերջնարդյունքին: Հետո խնդրում եմ խմբերին ամբողջական բացատ-րությամբ և հիմնավորմամբ բարձրաձայնել մեկ առանցքային կետ (ինքս եմ կատարում առանցքային կետերի բաշխումը): Հրավիրում եմ դասարանին ձեռք կամ քարտ բարձրաց-նելով

համաձայնել կամ փոփոխություն կատարել տվյալ առանցքային կետում, որից հետո գրում եմ այն գրատախ-տակին:

Մարդկանց արժեքները տարբեր են: Ոմանց համար հարստություն է ոսկին, մյուսների համար գեղեցկությունը և այլն: Սա է ցանկա-ցել ասել Բակունցը: Ճիշտ որոշում կայացնելու համար Կյանքում այդպես է պատահում: Մարդը նպատակ է դնում՝ փող, կարողութ-յուն: Եվ նա սկսում է ձգտել դրան՝ հաղթա-հարելով բոլոր խոչընդոտները՝ մոռանալով հանգստի, ընտանիքի, մարդկանց հետ, ովքեր ցանկանում են լինել նրա հետ, իր սիրած հոբբիի մասին և այլն: Գիշեր-ցերեկ նա գնում է իր նպատակին ՝ սրբելով իր ճանապարհին կանգնած ամեն ինչ: Եվ ահա, նպատակը՝ առաջին կլորիկ գումարն է: Հետո էլի ու էլի: Բայց ի՞նչ կա շուրջը: Ինչո՞ւ չկա ուրախու-թյուն և սեր, որը նա ուզում էր ստանալ՝ դառնալով հարուստ: Դա պարզ է. գնալով դեպի իր նպատակը՝ մարդը մերժեց իրեն սիրող մարդկանց, նրանց համար ժամանակ չուներ: Լարվելով ամբողջ ուժով՝ նա կորցրեց առողջությունը նպատակին հասնելու ճանա-պարհին: Շատ ժամանակ ծախսելով նպատա-կին հասնելու վրա՝ այն մնաց չիրականաց-ված՝ իսկ իր հոբբին մնաց լքված: Ընտրելով հակադրություններից մեկը՝ փողը, մարդը կորցրել է մնացած բոլորը: Եթե մարդը

գիտակցում է, որ իր համար բոլոր հակադրությունները հավասար են և հավասարապես նշանակալից, նա ձեռք կբերի ամբողջը, այսինքն. կստանա այն ամենը, ինչին նա ձգտում էր, այն, ինչ ուզում էր, ինչի մասին երազում էր և ինչը նույնիսկ չէր կարող պատկերացնել իր ամենախենթ երազներում: Եվ դա մարդուն կգա հենց այնպես, առանց որևէ պայքարի: Հենց որ մարդն իր մեջ միավորում է հակադրությունները և դառնում ամբողջական:

Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը ներկայացնում է Առաջին համաշխարհային պատերազմը՝ 1914 թվականի դեպքերը: Գյուղա-կան ընտանիքի պատմությունով Բակունցը նկարագրում է հայ գյուղացուն այդ տարիներին: Առաջին համաշխարհային պատերազմն էր՝ և, թագավորի հրամանով, հավաքում էին բոլոր ձիերին: Ձին թաքցնելու և չներկայացնելու դեպքում սահմանված էր ծանր տուգանք: Ցոլակը՝ Սիմոնի ձին, նրանց ընտանիքի միակ հույսն էր: Սիմոնը ձին գնել էր երկու տարի առաջ, տալով իրենց էշը, հորթը, մի կարպետ և երկու բեռ ցորեն, այսինքն ամբողջ տնտեսությունը: Ընտանիքը արցունքն աչքերին ճանապարհ է դնում Ցոլակին: Մի տխուր առավոտ էր, և գյուղացիները լուռ ճանապարհ են ընկնում դեպի քաղաք: Ցոլակին ընտանիքի

բոլոր անդամները շատ սիրում էին, ամենից շատ սիրում էր Շարմաղ բիբին։ Շարմաղը Սիմոնի մայրն էր, նրա դերը պատմվածքում մեծ չէ, բայց նրա և ձիու կապը ներկայացված է պատմվածքում։ Պատերազմի պատճառով իրենց գյուղի բնակիչներին հրամայեցին բոլոր ձիերի հետ ներկայանալ թագավորի մոտ, որպեսզի թագավորն ընտրի արժանի ձիեր, պատերազմում կռվելու համար։ Բնականաբար գյուղացիներից ոչ ոք չէր ցանկանում իր ձիուն կորցնել պատերազ-մում։ Երբ լուրը հասավ Սիմոնին, նա շատ անհանգստացավ, նա տարբերակ էր փնտրում Ցոլակին իրեն պահելու համար։ Սակայն նման տարբերակ չկար։ Միայն մերժվում էին այն ձիերը, որոնք ուժեղ չէին, ուժերը չէին համապատասխանում պատերազմում կռվե-լու համար։ Սիմոնը թագավորի մոտ գնալուց համեմատում էր Ցոլակին մյուս գյուղացիների ձիերի հետ։ Ուզում էր հասկանալ, արդյո՞ք թագավորը կընտրի Ցոլակին այդ ձիերի միջից։ Պատմվածքի գագաթնակետը գետափի տեսա-բանն է։ Իմանալով, որ հիվանդ ձիերին չեն տանում՝ Սիմոնը որոշում է Ցոլակի մեջքին չեչաքարով վերք բացել։ Ձիերին ընտրելու ժամանակ Սիմոնը առանձնանում է ամբոխ-ից, հեռու է տանում Ցոլակին, և քարով վնա-սում է ձիու մեջքը։ Ձին տանջվում է։ Սիմոնն այս քայլով

ցանկանում էր այնպես անել, որպեսզի Ցոլակը վատ վիճակում գտնվի, և չտանեն պատերազմ: Սակայն միևնույնն է Ցոլակին խլեցին և տարան: Սիմոնը կորցրեց իր ձիուն, վերադարձի ճանապարհին հիշում էր Ցոլակին, և ինչպես վնասեց Ցոլակին: Արդ-յունքում նա ոչ միայն կորցրեց իր ձիուն, այլ նաև դաժանաբար քարով վնասեց իր ձիու մաշկը:

Կոստանդ աղայի ձին վստահում էր տիրոջը, սակայն շարունակում էր հոգով լինել ազատ, իսկ Ցոլակը առանց կասկածելու էր վստահում, և երբ Սիմոնը նրա մեջքն էր տրորում, նա չէր ըմբոստանում, քանի որ գիտեր՝ տերը իրեն վատություն չի անի: Բակունցը ձիերին համեմատում է մարդկանց հետ՝ ոմանք հնազանդվում են և չեն առարկում, իսկ ոմանք հնազանդվում են, բայց նաև ցույց են տալիս իրենց ազատությունը, իսկ ոմանք չեն ընդունում անազատությունը: Այս զուգահեռները կարելի է տանել նաև պետությունների մեջ: Բակունցի ստեղծագոր-ծությունները գունեղ են և ընթերցողին կլանում են իրենց գիրկը: Բակունցի պատմը-վածքներում ընդհանուրը ժամանակի հաս-արակության, ժողովրդի կենցաղի արտացո-լումն է, ժամանակի բացասական իրավիճակը, անարդարությունը, անհավասարությունը:

Բակունցը այս պատմվածքով ներկայացնում է

	կյանքի անարդարությունը, անհավասարությունը, ինչպես գյուղացիներն էին ասում կյանքի սևն ու սպիտակը։ Բակունցն ապրում է իր հերոսների ճակատագրերով, որոնց մեջ, այնուամենայնիվ, ինչ որ լուսավոր շող կա։ Դաժան միջավայրում նրանք ստեղծում են իրենց կախարդական հեքիաթն ու ապրում են այդ հեքիաթի զույնե-րով։ Բակունցը սիրում և հասկանում էր բնու-թյան լեզուն։ Նրա գրեթե բոլոր ստեղծագոր-ծություններում կան գունեղ, կենդանի բնապ-ատկերներ, որոնք ունեն քնարական շունչ, հուզականություն։ Իր հայրենի երկրին, նրա մարդկանց, բնությանը, հող ու ջրին անսահ-ման մեծ սիրով նվիրված մարդն ու քաղաքա-ցին, մեծ գրողն ու արվեստագետը դարձավ ստալինյան բռնապետության զոհը։ 1937 թ. ամառային վաղ արշալույսին նա գնդակա-հարվեց Ծիծեռնակաբերդի բարձունքում…

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	«Հարցադրումներով դասավանդում» և «Առանցքային կետեր» մեթոդների միջոցով հակադրությունը բացահայտելու շնորհիվ սովորողները տիրապետում են հայոց լեզվին,

	գրավոր և բանավոր հաղորդակցվում են մայրենի լեզվով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության գործիք: Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել և մեկնաբանել տարբեր կարծիքներ: Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Սովորողը կատարում է ինքնուրույն եզրահանգումներ՝ օգտագործելով գիտելիքներն ու հմտությունները:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

Օգտագործված գրականություն

1. Емельянов Ю.И. Руководство коллективом как проблема социальной психологии. М., тип. Дашкова-из-е 4-е перер. и доп.: - 2006. – 144 с.
2. Բակունց Ա. Երկեր – Եր.: Սովետական գրող, 1986: - 672 էջ:
3. Աղաբաբյան Ս., Ակսել Բակունց, Երևան, Հայպետհրատ, 1959, 252 էջ:
4. Իշխանյան Ռ., Ակսել Բակունց. կենսագրություն և մատենագիտություն: Երևան, 1960: - 204 էջ:

5. Սովետահայ գրականության պատմություն, առաջին հատոր (1917-1941, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1961, 800 էջ:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	

Հավելված 1.

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ 2022-2023 ուստարի

Ամսաթիվ		
Դասարան	7-րդ	
Ուսուցիչ (ներ)	Պողոսյան Մարիամ	
Առարկա	Գրականություն	
Թեման (օրվա կամ շաբաթվա)	Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը	
Հիմնական հասկացություն	Հակադրությունները Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում	
Հիմնական հասկացություն	Հակադրությունները Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում	

Ենթահասկացություն	Հակադրություններ ժողովրդի և շրջապատի, Սիմոնի և հովատակի, Կոստանդի և Սիմոնի միջև ու պատերազմ և մարդ հակադրությունը:	
Խաչվող կամ ընդհանրական հասկացություն	**Ժամանակ և տարածություն** – գրողի կենսագրությունը, տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, **Պատճառ և հետևանք** – դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները, **Անհատական և մշակութային արժեհամակարգ** – գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները, ստեղծագործության գաղափարը:	
Միջառարկայական կապեր	**Հայոց լեզու** – Բառապաշար, խոսքային կաղապար և մտածողություն: **Պատմություն** – Պատմական ակնարկ գրողի կենսագրությանն ու ստեղծագործությանն առնչվող ժամանակաշրջանի մասին: **Հասարակագիտություն** – «Կոնֆլիկտ» և «Հակադրություն» հասկացությունները կյանքում և գրականության մեջ:	
Զնավորվող կարողունակություն	Լեզվական գրագիտություն և կարողունակություն, սովորել սովորելու և մշակութային կարողունակություն	
Նպատակները	1. Ամրապնդել և զարգացնել պատկերացումը Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում պատկերված մարդ-հասարակություն-բնություն փոխհարաբերությունների մասին: Բացահայտել հակադրությունները ժողովրդի և շրջապատի, Սիմոնի և հովատակի, Կոստանդի և Սիմոնի միջև ու պատերազմ և մարդ հակադրությունը: 2. Մեկնաբանի գրական կոնֆլիկտը՝ բախումը և նրա ազդեցությունը միջանձնային հարաբերությունների վրա: 3. Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքից ձեռքբերած գիտելիքը և կարողությունը կզարգացնեն սովորողների մոտ արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, տոկունություն, հավասարակշռվածություն:	**Նշումներ** (ուսուցիչները նշումներ են կատարում նախօրոք պլանավորված որևէ քայլի փոփոխության, նոր գաղափարի ի հայտ գալու մասին)

Անհրաժեշտ նյութեր	Դասագիրք, տեքստ, խմբային առաջադրանքներով թերթիկներ, աղյուսակներ և այլն):	
Կիրառվող մեթոդներ	«Հարցադրումներով դասավանդում» և «Առանցքային կետեր» մեթոդներ	
Դասի ընթացքը Ժամանակ	Ֆրոնտալ հարցման միջոցով վերհիշում ենք թեմայի կարևոր հատվածները։ Սովորողներին բաժանում ենք չորս խմբի։ Խնդրում եմ որպեսզի նրանք առողջ դատողության, փորձառության և նախկին գիտելիքի կիրառմամբ պատասխանեն հարցերի շղթայի՝ լրացնելով ընթերցելու բանալիներից իրենց բաժին ընկած աղյուսակները: Սահմանում եմ հարցերի քննարկման ժամանակը, կախված հարցի բովանդակությունից մինչև տաս րոպե։ Խնդրում եմ սովորողներին խմբով քննարկել իրենց գրառումները, ընդորում, համոզվում եմ, որ յուրաքանչյուր խումբ ունի գրող անձ, ով հավաքում է ողջ խմբի մտքերը, որպեսզի վերջում զեկուցի։ Հարցնում եմ, թե արդյոք նրանք հավելյալ ժամանակի կարիք ունե՞ն։ Վերջացնելուց հետո յուրաքանչյուր խմբին խնդրում եմ ներկայացնել իրենց խմբային պատասխանը հարցերին։ Խնդրում եմ խմբերին որոշել տեքստի առանցքային կետերը։ Նախապես պատրաստված առանցքային կետերը պահում եմ ինձ մոտ, և համեմատելով գրում եմ։ Դասարանի ընդհանուր պատասխանին հավելում եմ նրանց կողմից բաց թողնված լրացուցիչ առանցքային կետերը և շտկում եմ բոլոր թյուրըմ-բըռնումները (եթե սովորողները տալիս են պատասխանի մի մասը, դա խնայում է իմ խոսքի ժամանակը՝ առաջացնելով հետաքրքրություն և զարգացնելով մտածողության հմտություն-յունները)։ Մեծ շեղումների դեպքում, տալիս եմ ուղղորդող հարցեր, որոնք օգնում են աշակերտներին հնարավորինս մոտենալ իմ	

	առանցքային կետերին: Պարտադիր չէ, որ լինեն ճշգրիտ համընկնող կետեր, այլ կարևոր է, որ իմաստը արտահայտի և նպաստի ուսումնառության վերջնարդյուն-քին: Հետո խնդրում եմ խմբերին ամբողջական բացատրու-թյամբ և հիմնավորմամբ բարձրաձայնել մեկ առանցքային կետ (ինքս եմ կատարում առանցքային կետերի բաշխումը): Հրավիրում եմ դասարանին ձեռք կամ քարտ բարձրացնելով համաձայնել կամ փոփոխություն կատարել տվյալ առանց-քային կետում, որից հետո գրում եմ այն գրատախտակին:	
10 րոպե	1. Յուրացման կամ ուսումնասիրվող առաջադրանքի ստուգում. անհասկանալի հարցերի պարզաբանում:	
2 րոպե	1. **Խթանում,** նոր նյութի մուտք. նշել կիրառվող մեթոդը: **Խթանման հարց** - Գտնել գլխավոր հերոսին Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում:	
23 րոպե	**Իմաստավորում**. նոր նյութի ուսուցում կամ միասին ուսումնասիրում (այս փուլի համար կիրառվող մեթոդներից մեկը նշել): Գտնել հակադրությունները Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում: Խնդրում եմ խմբերին պտասխանել առաջադրված հարցին «Հարցադրումներով դասավանդում»: **Առաջադրանք –** Հաջորդ ժամին ներկայացնել խմբային աշխատանքը պաստառով: Խմբերին առաջադրանքները բաժանված են աղյուսակներով: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի հակադրության իր տեսակը (Հավելված 2):	
5 րոպե	2. **Կշռադատում**. նոր նյութի ամրապնդում. Լրացնել աղյուսակները, կատարել խմբային առաջադրանքները (կիրառել այն մեթոդները, որոնք նախատեսվում են այս փուլի համար): «Առանցքային կետեր» մեթոդ Խնդրում եմ խմբերին որոշել տեքստի առանցքային կետերը: Հիմնականում ինքնուրույն խմբային աշխատանքն է՝ ուսուցչի ուղղորդումով:	*Աշակերտներին տրվող հրահանգները հստակ ձևակերպել, հիշել, որ դրանք կապված պիտի լինեն և պիտի բխեն նպատակներից և հնարավորություն տան*

		հասնելու վերջնարդյունքին:
5 րոպե	4. **Անդրադարձ.** Ի՞նչ նոր բան իմացար, ի՞նչը լավ արեցիր այսօր: Տնային առաջադրանք:	Կիրառել անդրադարձի հնարներ:
Ամսաթիվ		
Դասարան	7-րդ	
Ուսուցիչ (ներ)	Պողոսյան Մարիամ	
Առարկա	Գրականություն	
Թեման (օրվա կամ շաբաթվա)	Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածք թեմայի ամփոփում: :	
Դասի ընթացքը Ժամանակ 4 (5+2)	Խմբային աշխատանքի ներկայացում	
Զնավորվող կարողունակություն	Լեզվական գրագիտություն և կարողունակություն, սովորել սովորելու և մշակութային կարողունակություն	
Նպատակները	1, Ամրապնդել և զարգացնել պատկերացումը Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում պատկերված մարդ-հասարակություն-բնություն փոխհարաբերությունների մասին: Բացահայտել հակադրությունները ժողովրդի և շրջապատի, Սիմոնի և հովատակի, Կոստանդի և Սիմոնի միջև ու պատերազմ և մարդ հակադրությունը: 2, Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքից ձեռքբերած գիտելիքը և կարողությունը կզարգացնեն սովորող-նե-րի մոտ արդարամտություն, լայնախոհություն, համար-ձակություն, տոկունություն, հավասարակշռվածություն:	
Կիրառվող մեթոդներ 15 րոպե	Հետազոտության հարցաշարի լրացում	
2 րոպե	4. **Անդրադարձ.** Ի՞նչ նոր բան իմացար, ի՞նչը լավ արեցիր այսօր: Տնային առաջադրանք:	Կիրառել անդրադարձի հնարներ: